



«Տարոն» պարային համույթի պարուսույց

Սուրեն Աբրամյանը ծնվել է 1993թ-ի սեպտեմբերի 24-ին քաղաք Թբիլիսիում:

2000թ-ին ընդունվել են Թբիլիսիի թիվ 104 (Վանքի դպրոց) միջնակարգ

դպրոցը: Դպրոցական տարիներին հաճախել են տարբեր խմբակների՝ պարի, դաշնամուրի և ձյուդոյի: Առանձնահատուկ սեր և հետաքրքրություն է դրսևորել ազգագրական և ժողովրդական պարերի նկատմամբ:

2012 թ-ին՝ դպրոցն ավարտելուն պես, զորակոչվել է բանակ: Վրացական զինված ուժերում զինծառայությունն ավարտելու հետո, 2013 թվականին ընդունվել է Վրաստանի տեխնիկական համալսարան՝ գազի և նավթի ինժեներիայի բաժին:

2015 թվականին ընդունվել է Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոն որպես «Տարոն» պարային խմբի պարուսույց:

2015 և 2016 թվականներին հայ ազգագրագետ Գագիկ Գինոսյանի մոտ անցել է պարարվեստից վարպետության դասեր: Ամուրի է: